ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» նոյեմբերի 2016 թվական N 206-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 69-րդ հոդվածի 1-ին մասով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 42-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) 1-ին տողի 6-րդ սյունակում «1 000 000» թիվը փոխարինել «600 000» թվով,
   2) 1-ին տողի 4-րդ սյունակում «այլ հողեր» բառերը փոխարինել «բնակելի կառուցապատում» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան _____

Ա. Ադամյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Է. Մկրտչյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«10» նոյեմբերի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» նոյեմբերի 2016 թվական N 207-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի N 119-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 5-րդ մասի 1-ին պարբերությամբ՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 16-ի «Օյունջյան» բարեգործական հիմնադրամին հողամաս նվիրաբերելու մասին» N 119-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.
   1) «0,1125 (զրո ամբողջ մեկ հազար հարյուր քսանհինգ տասհազարերորդական)» թիվը և բառերը փոխարինել «0,149148 (զրո ամբողջ մեկ հարյուր քառասունինը հազար մեկ հարյուր քառասունութ միլիոներորդական)» թվով և բառերով,
   2) «հողամասը» բառից հետո լրացնել «(կադաստրային ծածկագիր 08-001-0634-0016)» բառերը և թիվը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան _____

Ա. Ադամյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Է. Մկրտչյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **Մ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«10» նոյեմբերի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» նոյեմբերի 2016 թվական N 208-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի № 195-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ և 688-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի «զ» և «թ» կետերով,«Իրավական ակտերի Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված «Գեղագիտության ազգային կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերության Գյումրու մասնաճյուղի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու թիվ 1 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենների գրությունները (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի նոյեմբերի 12-ին N 14747 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող ներքոգրյալ շենք-շինությունները դրանց պահպանմանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը հուշարձանների պահպանության, գիտամշակութային և ուսումնակրթական խնդիրների լուծման նպատակով, 30 (երեսուն) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել հետևյալ կազմակերպություններին.

1) «Գեղագիտության ազգային կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերությանը՝ քաղաք Գյումրի, Աբովյան փողոց, N 216 հասցեի 1099,44 (հազար իննսունինն ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունը և 647,73 (վեց հարյուր քառասունյոթ ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը Գյումրու մասնաճյուղի գործունեությունը ապահովելու համար.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը քաղաք Գյումրի Հաղթանակի պողոտա № 47 և Աթարբեկյան փողոց № 88 հասցեների համապատասխանաբար 1202,84 (մեկ հազար երկու հարյուր երկու ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունը, 2713,0 (երկու հազար յոթ հարյուր տասներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասը և 657,14 (վեց հարյուր հիսունյոթ ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունը, 3463,0 (երեք հազար չորս հարյուր վաթսուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասը,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի «Շիրակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը քաղաք Գյումրի Մյասնիկյան փողոց N 118 հասցեի 194,26 (հարյուր իննսունչորս ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի
մետր մակերեսով շինությունը և 699,94 (վեց հարյուր իննսունինն ամբողջ իննսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը,

4) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու թիվ 1 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը քաղաք Գյումրի Աճեմյան փողոց № 40 հասցեի 2045,06 (երկու հազար քառասունհինգ ամբողջ վեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունը և 3583,18 (երեք հազար հինգ հարյուր ութսուներեք ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը:

2. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հասարակական նշանակության շենք-շինություններ ու նրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասեր անհատույց օգտագործման տրամադրելու մասին» № 195-Ա որոշումը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպությունների հետ օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրեր (պատասխանատու՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):

4. Հանձնարարել Գյումրի համայնքի «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպությունների հետ հուշարձանների պահպանության պարտավորագրերի կնքումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս.Բալասանյան _____

Ա. Ադամյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Է. Մկրտչյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«10» նոյեմբերի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» նոյեմբերի 2016 թվական N 209-Ա

«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ 11 ՀԱՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքում տնազրկության հիմնախնդրի վերացմանը խթանելու նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. «Առդա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի քաղաքում 11 հատ սոցիալական բնակարանի կառուցում» ծրագրին մասնակցելու համար «Առդա» բարեգործական հիմնադրամի հետ կնքել համատեղ գործնեության պայմանագիր:
2. Ծրագրին մասնակցության համար կատարել ներդրում՝ ծրագրի նախահաշվային արժեքի 15%-ի չափով:
3. Սահմանել, որ՝
   1) Գյումրի համայնքի կողմից կատարվող ներդրումների չափը կազմում է 13.500.000 (տասներեք միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որից՝
      ա. նախագծանախահաշվային փաստաթղթերի տրամադրում, շինթույլտվության հետ կապված գործառույթների և արտաքին ջրամատակարարման ու ջրահեռացման աշխատանքների իրականացում՝ 9.900.000 (ինը միլիոն ինը հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,
      բ. 3.500.000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի փոխանցում «Առդա» բարեգործական հիմնադրամի հաշվին՝ շինմոնտաժային աշխատանքների համար,
      գ. 100.000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ տեղական վճարի փոխհատուցում:

4.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին՝ ապահովել սույն որոշման 3-րդ կետում նշված գումարների հատկացումը՝ Գյումրի համայնքի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման 4819 տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան _____

Ա. Ադամյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Է. Մկրտչյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«10» նոյեմբերի 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«10» նոյեմբերի 2016 թվական N 210-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության 14^3 հոդվածի 5-րդ մասով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Փոփոխել ներկայացված հողամասերի նպատակային նշանակությունները՝ որպես էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության հողերի՝ համաձայն NN 1,2 հավելվածների:

	Կողմ (17)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ս. Բալասանյան			
Ա. Ադամյան			
Հ. Կարապետյան			
Լ. Խաչատրյան			
Է. Մկրտչյան			
Տ.Հովհաննիսյան			
Մ. Սահակյան			
Լ. Սանոյան			
Վ. Եդիգարյան			
Ա. Գրիգորյան			
Վ. Հունանյան			
Գ. Սարգսյան			

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«10» նոյեմբերի 2016 թ.